



ՀՀ, ք. Երևան 0010, Բյուզանդի 1, տարածք 50
Հեռ/Ֆաքս: (374 10) 544587, (374 60) 53 45 87
Էլ. փոստ՝ general@fcm.am
Կայք՝ www.fcm.am

Հաստատված է

«ՖՅՈՒՉՐ ԿԱՊԻՏԱԼ ՄԱՐԿԵՏ» Սահմանափակ
Պատասխանատվությամբ Ընկերության
մասնակիցների ընդհանուր ժողովում
« 28 » փետրվարի 2019թ.

Ժողովի նախագահ՝ **Տ. Խանիկյան**

(ստորագրություն)

**«ՖՅՈՒՉՐ ԿԱՊԻՏԱԼ ՄԱՐԿԵՏ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ԿԱՆՈՆՆԵՐ

(նոր խմբագրությամբ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 «Արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցման կանոններ»-ը (այսուհետ՝ Կանոններ) սահմանում են «ՖՅՈՒԶՐ ԿԱՊԻՏԱԼ ՄԱՐԿԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) Հաճախորդների կողմից Ընկերություն ներկայացված արժեթղթերով առք/վաճառքի գործարքների կնքման պատվերների ընդունման, հաղորդման, ինչպես նաև Հաճախորդների հաշվին արժեթղթերով առք/վաճառքի գործարքների կատարման կարգն ու պայմանները: Մասնավորապես՝
- 1.1.1 Հաճախորդներին տրամադրվող տեղեկատվությունը և դրա ներկայացման ձևը.
 - 1.1.2 Հաճախորդներից պահանջվող տեղեկատվության կազմը և դրա ներկայացման ձևը.
 - 1.1.3 Պատվերի ձևը, դրանում ներառվող տեղեկությունները (այդ թվում՝ պատվերի տեսակները), պատվերի ներկայացման, ինչպես նաև դրանում փոփոխությունների կատարման կարգը, պատվերների ստացման և հաղորդման գրանցումները.
 - 1.1.4 Գործարքների կնքման և կատարման կարգը.
 - 1.1.5 Պատվերների կատարման քաղաքականությունը.
 - 1.1.6 Գործարքի վավերագրի ձևը, դրանում ներառվող տեղեկությունները և գործառնական բաժին դրա ներկայացման կարգը.
 - 1.1.7 Հաճախորդներին տրամադրվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը և ձևը.
 - 1.1.8 Ընկերության յուրաքանչյուր բրոքերի կողմից առանց համապատասխան ղեկավարի վավերացման, պատվերի հիման վրա կնքվող գործարքի թույլատրելի առավելագույն սահմանաչափը.
 - 1.1.9 Բրոքերային ծառայությունների մատուցման դիմաց գանձվող վճարների գնագոյացման (ձևավորման) սկզբունքները.
 - 1.1.10 Բրոքերային ծառայությունների մատուցման արդյունքում առաջացող ռիսկերը և դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումները:
- 1.2 Սույն Կանոնները մշակված են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքին (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ և այլ իրավական ակտերին համապատասխան:

2. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

- 2.1 Լրիվ անվանումը՝ «ՖՅՈՒԶՐ ԿԱՊԻՏԱԼ ՄԱՐԿԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն.
- 2.2 Պետական գրանցման վկայական թիվ 4, գրանցման համար 4, գրանցման ամսաթիվ՝ 27.06.2008թ.
- 2.3 Լիցենզիա՝ Ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա ՆԸ 0004:

3. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 3.1 Սույն Կանոններում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.
- 3.1.1 **«Բրոքերային ծառայություններ».** Ընկերության կողմից Հաճախորդներից արժեթղթերով առք/վաճառքի գործարքների կատարման պատվերների ընդունման և հաղորդման, ինչպես նաև իր կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին արժեթղթերով առք/վաճառքի գործարքների կատարման հետ կապված ծառայություններ.
 - 3.1.2 **«Բրոքեր».** Անձ, որն Ընկերության կազմում կամ անունից մատուցում է բրոքերային ծառայություններ.
 - 3.1.3 **«Հաճախորդ».** Ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ կամ վերջիններիս լիազոր ներկայացուցիչ, որն օգտվում է Ընկերության բրոքերային ծառայություններից, կամ որը դիմել է Ընկերությանը՝ բրոքերային ծառայություններից օգտվելու նպատակով.
 - 3.1.4 **«Պայմանագիր».** Բրոքերային ծառայություններից օգտվելու համար Ընկերությանը դիմած անձի և Ընկերության միջև կնքված փաստաթուղթ, որում սահմանվում են տվյալ անձի արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով գործարքի կնքման, կատարման, ծառայությունների դիմաց վճարման, հաշվետվողականության հետ կապված կողմերի իրավահարաբերությունները.
 - 3.1.5 **«Պատվեր».** Արժեթղթերով գործարքների կնքման նպատակով Հաճախորդի կողմից Ընկերությանը տրվող հանձնարարական, ինչպես նաև Ընկերության կարգադրությունը, հանձնարարությունը, հայտը կամ առաջարկը.

- 3.1.6 **«Հանձնարարական».** Պատվերում նշվող տեղեկությունների համախումբ, որը ներառում է պատվերի հիման վրա գործարքի կնքման համար անհրաժեշտ գնային, ծավալային և ժամանակային պայմանները.
 - 3.1.7 **«Հայտ».** Բրոքերի կողմից կարգավորվող կամ չկարգավորվող շուկաներում տրվող արժեթղթի առք/վաճառքի առաջարկ.
 - 3.1.8 **«Հայտերի հերթ».** Բրոքերի կողմից մուտքագրված և դեռևս չբավարարված հայտերի՝ որոշակի հատկանիշի (հատկանիշների) հիման վրա կանոնակարգված հաջորդականություն.
 - 3.1.9 **«Բավարարել լրիվ» հանձնարարական.** Հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացվող հանձնարարական, որը նախատեսում է պատվերի կատարում բացառապես դրանում նշված քանակով արժեթուղթ գնելու կամ վաճառելու պայմանով.
 - 3.1.10 **«Բավարարել մասնակի» հանձնարարական.** Հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացվող հանձնարարական, որը նախատեսում է պատվերի կատարումը մասնակիորեն՝ մնացորդը հայտերի հերթում ընդգրկելու պայմանով.
 - 3.1.11 **«Հանել մնացորդը» հանձնարարական.** Հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացվող հանձնարարական, որը նախատեսում է պատվերի անմիջապես կատարում դրանում նշված արժեթղթի քանակի հնարավոր առավելագույն չափով՝ մնացորդը հայտերի հերթում չընդգրկելու պայմանով.
 - 3.1.12 **«Ամիջապես բավարարել կամ հանել» հանձնարարական.** Հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացվող հանձնարարական, որը նախատեսում է պատվերի անմիջապես կատարում՝ պատվերում նշված գնով և լրիվ քանակով, հակառակ դեպքում չի ընդգրկվում հայտերի հերթում.
 - 3.1.13 **«Պահել հերթում մինչև բավարարումը» հանձնարարական.** Հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացվող հանձնարարական, որը նախատեսում է, որ պատվերի հիման վրա կազմված հայտը կարող է մնալ հայտերի հերթում՝ մինչև պատվերում նշված լրիվ քանակով արժեթղթերի գնումը կամ վաճառքը.
 - 3.1.14 **«Շուկայական հանձնարարական».** Հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացվող պատվերում նշված հանձնարարական, որը նախատեսում է պատվերի կատարում՝ տվյալ պահին շուկայում գոյություն ունեցող լավագույն գնով անմիջապես արժեթուղթ գնելու կամ վաճառելու պայմանով.
 - 3.1.15 **«Գնման/վաճառքի լիմիտային հանձնարարական».** Հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացվող պատվերում նշված հանձնարարական, որը նախատեսում է պատվերի կատարում՝ դրանում ֆիքսված գնից ոչ բարձր (ոչ ցածր) գնով արժեթուղթ գնելու (վաճառելու) պայմանով.
 - 3.1.16 **«Գնման/վաճառքի ստոպ հանձնարարական».** Հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացվող պատվերում նշված հանձնարարական, որը նախատեսում է պատվերի կատարում՝ դրանում նշված գնին կարգավորվող շուկայում կամ կարգավորվող շուկայից դուրս տվյալ արժեթղթի գինը հասնելու դեպքում.
 - 3.1.17 **«Գնման/վաճառքի ստոպ լիմիտային հանձնարարական».** Հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացվող պատվերում նշված հանձնարարական, որը միաժամանակ ներառում է գնման (վաճառքի) լիմիտային հանձնարարական մի գնով և գնման (վաճառքի) ստոպ հանձնարարական մեկ այլ գնով.
 - 3.1.18 **«Գործառնական բաժին».** Ընկերության ստորաբաժանում, ստորաբաժանման բացակայության դեպքում՝ Ընկերության գործադիր տնօրենը կամ վերջինիս հրամանով սահմանված այլ աշխատակից, որն իրականացնում է գործարքների, Հաճախորդների պատվերների, գործարքների վավերագրերի, ինչպես նաև Հաճախորդների արժեթղթերի և/կամ դրամական միջոցների հաշվառում.
 - 3.1.19 **«Գործարքի վավերագիր».** Գործարքը կնքող բրոքերի կողմից կազմվող, գործարքի կնքումը հավաստող և գործառնական բաժին ներկայացվող փաստաթուղթ.
 - 3.1.20 **«Պրոֆեսիոնալ հաճախորդ».** Հաճախորդ, որն ունի համապատասխան փորձ և գիտելիք ինքնուրույն ներդրումային որոշումներ իրականացնելու և դրանցից բխող ռիսկերը գնահատելու համար:
- 3.2 Մույն Կանոններում կիրառվող այլ հասկացություններն ունեն Օրենքով և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված նշանակությունները:

4. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՏՐԱՍՄԻՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՉԵՎԸ

- 4.1 Նախքան պայմանագրի կնքումը և բրոքերային ծառայությունների մատուցումն Ընկերությունն իր Հաճախորդներին է տրամադրում հետևյալ տեղեկատվությունը՝
 - 4.1.1 Ընկերության և նրա կողմից մատուցվող բրոքերային ծառայությունների մասին,

- 4.1.2 Արժեթղթերի տեսակների և հնարավոր ռիսկերի մասին,
- 4.1.3 Գործարքի կնքման վայրի (միջոցի) մասին (կարգավորվող շուկա կամ չկարգավորվող շուկա),
- 4.1.4 Բրոքերային ծառայությունների մատուցման ընթացքում առաջացող ծախսերի և միջնորդավճարների մասին,
- 4.1.5 ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ տեղեկություններ:
- 4.2 Սույն Կանոնների 4.1 կետով սահմանված տեղեկությունները Հաճախորդին են ներկայացվում բանավոր կամ ստանդարտ ձևով (գրքույկի կամ բուկլետի տեսքով):
- 4.3 Նախքան պայմանագրի կնքումը և բրոքերային ծառայությունների մատուցումն Ընկերությունը դասակարգում է Հաճախորդներին՝ որպես պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ ներդրումային ծառայություններից որևէ մեկի կամ բոլոր ծառայությունների մասով, կամ որևէ գործարքի կամ արժեթղթի որևէ տեսակով (դասով) գործարքների մասով:
- 4.4 Որպես պրոֆեսիոնալ Հաճախորդ են դասակարգվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ի (այսուհետ՝ Կանոնակարգ 4/07) 14-րդ կետով սահմանված անձինք:
- 4.5 Հաճախորդի նախաձեռնությամբ Ընկերության կողմից որպես պրոֆեսիոնալ Հաճախորդ կարող են դասակարգվել սույն Կանոնների 4.4 կետում չնշված այն անձինք, որոնք բավարարում են հետևյալ չափանիշներից առնվազն երկուսին.
- 1) Հաճախորդը դիմումի ներկայացմանը նախորդող 4 եռամսյակների ընթացքում արժեթղթերի շուկայում իրականացրել է 10 և ավելի գործարք միջին եռամսյակային կտրվածքով, ընդ որում՝ մեկ գործարքի ծավալը միջին հաշվով կազմում է առնվազն մեկ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ,
 - 2) Հաճախորդի արժեթղթերի փաթեթի մեծությունը դիմումի ներկայացման պահին գերազանցում է 100 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը,
 - 3) Հաճախորդը ֆինանսական շուկայում ունի առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, որը պահանջում է հաճախորդին մատուցվող այն ծառայությունների հետ կապված գիտելիքներ, որոնց հետ կապված վերջինս նախաձեռնություն է իրականացնում պրոֆեսիոնալ դասակարգվելու համար:
- 4.6 Ընկերության կողմից սույն Կանոնների 4.5 կետում նշված անձանց պրոֆեսիոնալ Հաճախորդի դասակարգումը համարվում է վավեր, եթե Հաճախորդի գիտելիքների և փորձի վերաբերյալ Ընկերության կողմից իրականացված գնահատումը հավաստիացնում է, որ Հաճախորդը ներդրումային ծառայություններից օգտվելու, ներդրումային որոշում կայացնելու և դրանց հետ կապված ռիսկերն ընկալելու համապատասխան ունակություն և գիտելիք ունի:
- 4.7 Սույն Կանոնների 4.6 կետով նախատեսված գնահատումն իրականացվում է Հաճախորդի կողմից «Հաճախորդի գիտելիքների և փորձի վերաբերյալ գնահատման հարցաթերթիկ»-ի (այսուհետ՝ Հարցաթերթիկ) լրացմամբ: Հարցաթերթիկում պարունակվող յուրաքանչյուր հարց ունի պատասխանի մի քանի տարբերակ՝ գնահատման գոյից հինգ միավորներով: Ընդ որում, իրավաբանական անձանց դեպքում, Հարցաթերթիկը լրացվում է իրավաբանական անձի այն ղեկավարի կամ աշխատակցի կողմից, որն իրավասու է իրավաբանական անձի անունից գործարքներ կնքել:
- 4.8 Սույն Կանոնների 4.7 կետով սահմանված Հարցաթերթիկը ներկայացվում է Հավելված 1¹-ին համապատասխան:
- 4.9 Հարցաթերթիկի լրացման արդյունքներով 70 և ավելի միավոր հավաքելու դեպքում Հաճախորդը կդասակարգվի որպես պրոֆեսիոնալ, հակառակ դեպքում՝ որպես ոչ պրոֆեսիոնալ:
- 4.10 Նախքան պրոֆեսիոնալ Հաճախորդների հետ պայմանագրի կնքելը կամ սույն կանոնների 4.5 կետում նշված անձանց պրոֆեսիոնալ Հաճախորդ դասակարգելը Ընկերությունն այդ Հաճախորդներին գրավոր տեղեկացնում է այն մասին, որ կանոնակարգ 4/07-ով սահմանված որոշակի պահանջներ չեն գործելու իր և Հաճախորդի փոխհարաբերություններում՝ ներկայացնելով այդ պահանջների էությունը:
- 4.11 Սույն կանոնների 4.5 կետում նշված Հաճախորդները, որոնք ներդրումային ծառայություններից որևէ մեկի կամ բոլոր ծառայությունների մասով, կամ որևէ գործարքի կամ արժեթղթի որևէ տեսակով (դասով) գործարքներին վերաբերող ծառայության կամ ծառայությունների մասով նախաձեռնել են պրոֆեսիոնալ դասակարգվել, համապատասխան գրավոր հայտարարություն են ներկայացնում Ընկերությանն այն մասին, որ.
- 4.11.1 համաձայն են դասակարգվել որպես պրոֆեսիոնալ Հաճախորդ՝ տվյալ ծառայության կամ գործարքի մասով,
 - 4.11.2 տեղյակ են, որ որևէ ծառայության կամ գործարքի մասով որպես պրոֆեսիոնալ Հաճախորդ դասակարգվելու դեպքում Հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական որոշակի պահանջներ չեն

գործում իրենց նկատմամբ տվյալ ծառայության կամ գործարքի մասով, և այդ պատճառով իրենք կորցնում են որոշակի պաշտպանվածություն:

- 4.12 Ընկերությունը կարող է իր՝ որպես պրոֆեսիոնալ դասակարգված Հաճախորդին չտրամադրել սույն Կանոնների 4.1 կետի 4.1.1, 4.1.2 և 4.1.4 ենթակետերով սահմանված տեղեկատվությունը:
- 4.13 Հաճախորդին՝ որպես պրոֆեսիոնալ դասակարգելու դեպքում Ընկերությունը պարտավոր է համապատասխան գրառում կատարել Հաճախորդի հետ կնքվող պայմանագրում:
- 4.14 Պրոֆեսիոնալ համարվող Հաճախորդի նախաձեռնությամբ, կամ եթե առկա է Հաճախորդի համաձայնությունը՝ նաև Ընկերության նախաձեռնությամբ, Ընկերությունը կարող է իր՝ պրոֆեսիոնալ համարվող հաճախորդին վերաբերվել որպես ոչ պրոֆեսիոնալ և տվյալ Հաճախորդի նկատմամբ կիրառել ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական պահանջները:
- 4.15 Ընկերությունը պրոֆեսիոնալ Հաճախորդներին դասակարգելիս պարտավոր է այդ Հաճախորդի հետ կնքված պայմանագրում ներառել դրույթ, համաձայն որի պրոֆեսիոնալ համարվող Հաճախորդները պարտավոր են Ընկերությանը տեղեկացնել այն փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել Հաճախորդի պրոֆեսիոնալ դասակարգման վրա: Եթե Հաճախորդի կողմից տրամադրված կամ այլ կերպ Ընկերությանը հասանելի դարձած տեղեկատվության հիման վրա Ընկերության գնահատականով Հաճախորդն այլևս չի բավարարում այն պայմաններին, որոնց հիման վրա դասակարգվել է պրոֆեսիոնալ Հաճախորդ, կամ եթե Ընկերությունը պարզում է, որ Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկությունները եղել են անարժանահավատ, ապա Ընկերությունն անհապաղ դադարեցնում է Հաճախորդի պրոֆեսիոնալ դասակարգումը, որի մասին 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է Հաճախորդին:

5. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՑ ՊԱՀԱՆՁՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԴՐԱ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՉԵՎԸ

- 5.1 Ընկերությունը պարտավոր է մինչև պատվերի ընդունումը Հաճախորդից պահանջել տեղեկատվություն մատուցվող բրոքերային ծառայությունների կամ արժեթղթերի վերաբերյալ Հաճախորդի գիտելիքների և փորձի մասին: Մասնավորապես՝
 - 5.1.1 տեղեկություններ այն բրոքերային ծառայությունների, արժեթղթերով գործարքների և արժեթղթերի մասին, որոնց հետ որևէ կերպ առնչվել է Հաճախորդը.
 - 5.1.2 Հաճախորդի կողմից արժեթղթերով կատարված գործարքների բնույթը, ծավալը և հաճախականությունը, ինչպես նաև ժամանակահատվածը, որի ընթացքում կատարվել են այդ գործարքները.
 - 5.1.3 Հաճախորդի կրթական մակարդակը, մասնագիտությունը և զբաղմունքը:
- 5.2 Սույն Կանոնների 5.1 կետով սահմանված տեղեկությունները ներկայացվում են Հավելված 1-ին համապատասխան:
- 5.3 Ընկերությունը Հաճախորդի գիտելիքների և փորձի մասին տեղեկացված է համարվում, եթե վերոնշյալ տեղեկություններ պարունակող Հավելված 1-ը ներկայացվել է առձեռն, ուղարկվել է փոստով կամ ներկայացվել է Հաճախորդի և բրոքերի միջև համաձայնեցված կապի այլ միջոցներով:
- 5.4 Ընկերությունը կարող է համարել, որ իր պրոֆեսիոնալ Հաճախորդներն ունեն սույն Կանոնների 5.1 կետով անհրաժեշտ գիտելիքներն ու փորձը, և չպահանջել Հավելված 1-ով սահմանված տեղեկատվությունը:
- 5.5 Այն դեպքում, երբ Ընկերությունը Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա գտնում է, որ իր կողմից մատուցվող բրոքերային ծառայությունը կամ արժեթուղթը չեն համապատասխանում Հաճախորդի պահանջներին, ապա Ընկերությունը բանավոր կերպով զգուշացնում է Հաճախորդին այդ մասին:
- 5.6 Այն դեպքում, երբ Հաճախորդը չի տրամադրում Հավելված 1-ով սահմանված տեղեկատվությունը կամ տրամադրում է ոչ բավարար տեղեկատվություն, Ընկերությունը պարտավոր է բանավոր կերպով զգուշացնել Հաճախորդին այն մասին, որ Հաճախորդի նման վարքագիծը թույլ չի տալիս գնահատել, թե արդյո՞ք տվյալ ծառայությունը կամ արժեթուղթը համապատասխանում են Հաճախորդի պահանջներին:
- 5.7 Հաճախորդը պարտավոր է Հավելված 1-ով ներկայացված տեղեկությունների փոփոխության դեպքում, որոնք հանգեցնում են Հաճախորդի պահանջների փոփոխությանը, տեղեկացնել Ընկերությանը՝ փոփոխության մասին տեղեկանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում Հավելված 1-ով սահմանված փոփոխված տեղեկությունները ներկայացնելու միջոցով:
- 5.8 Ընկերությունը Հաճախորդի պահանջների փոփոխությունների մասին տեղեկացված է համարվում, եթե փոփոխված տեղեկություններ պարունակող Հավելված 1-ը ներկայացվել է առձեռն, ուղարկվել է փոստով կամ ներկայացվել է Հաճախորդի և բրոքերի միջև համաձայնեցված կապի այլ միջոցներով:

**6. ՊԱՏՎԵՐԻ ՉԵՎԸ, ՊԱՏՎԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

- 6.1 Հաճախորդը կարող է Ընկերությանն արժեթղթերի առք/վաճառքի պատվեր տալ Հավելված 2-ով սահմանված բովանդակությամբ և ձևով՝ պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում:
- 6.2 Պայմանագրով պատվերում կարող են նախատեսվել նաև այլ տեղեկություններ՝ սահմանված Ընկերության և Հաճախորդի փոխադարձ համաձայնությամբ:
- 6.3 Հաճախորդի արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով գործարքների կնքման համար հիմք է հանդիսանում միայն Հաճախորդի կողմից Հավելված 2-ին համապատասխան լրացված և գործառնական բաժին ներկայացված պատվերը: Վերջինս գործառնական բաժին ներկայացված է համարվում, եթե այն ներկայացվել է առձեռն, ուղարկվել է փոստով, տրվել է հեռախոսով կամ Հաճախորդի և բրոքերի միջև համաձայնեցված կապի այլ միջոցներով (պատվերների ներկայացում գրավոր և ոչ գրավոր ձևով): Հաճախորդի և բրոքերի միջև համաձայնեցված կապի այլ միջոցները սահմանվում են պայմանագրով:
- 6.4 Հաճախորդի կողմից պատվերը գրավոր ձևով ներկայացվելու դեպքում այն տրվում է երկու օրինակից, ընդ որում, մեկ օրինակը մնում է գործառնական բաժնում, իսկ մյուս օրինակը «Պատվերն ընդունված է» նշագրմամբ և գործառնական բաժնի պատասխանատու աշխատակցի (այսուհետ՝ Պատասխանատու) ստորագրությամբ վերադարձվում է Հաճախորդին:
- 6.5 Հաճախորդի կողմից պատվերն առձեռն ներկայացվելու դեպքում Պատասխանատուն ստուգում է պատվերը ներկայացնող անձի լիազորությունները:
- 6.6 Հաճախորդի կողմից պատվերն առձեռն ներկայացնելիս վերջինիս ներկայացման պահ է համարվում Պատասխանատուի կողմից այն ընդունելու մասին պատվերում նշագրում կատարելու պահը:
- 6.7 Փոստով ընդունված պատվերի դեպքում Պատասխանատուն ստուգում է պատվերն ուղարկողի կողմից դրված ստորագրությունը՝ համեմատելով այն պայմանագրի վավերապայմանների հետ:
- 6.8 Փոստով ընդունված պատվերի ստացման պահ է համարվում Ընկերության ստացվող փաստաթղթերի (ՄՏԻՑ) գրանցամատյանում համապատասխան գրառում կատարելու պահը:
- 6.9 Ոչ գրավոր ձևով պատվերի ներկայացման դեպքում Պատասխանատուն ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը ոչ գրավոր ձևով ստացված տեղեկատվության հիման վրա լրացնում և ստորագրում է Հավելված 2-ով սահմանված պատվերի ձևը՝ նշելով տեղեկատվության ստացման ժամանակը՝ ըստ էության, և իր անունը, ազգանունը:
- 6.10 Հեռախոսով պատվեր ստանալու դեպքում Պատասխանատուն պետք է նույնականացնի Հաճախորդին: Հաճախորդի նույնականացումը կատարվում է վերջինիս հետ կնքված պայմանագրում նշված գաղտնաբառի հարցում կատարելու միջոցով: Հաճախորդին շնորհված գաղտնաբառը բաղկացած է երկու մասից՝ Ընկերության տարբերակիչ ծածկագրից և հերթական համարից: Ընկերության տարբերակիչ ծածկագիրն իրենից ներկայացնում է լատինական այբուբենի մեծատառերով արտահայտված՝ Ընկերության անվանման առաջին երկու բառերի սկզբնատառերը (FC): Հերթական համարն իրենից ներկայացնում է արաբական թվանշաններից կազմված և 5 նիշից բաղկացած թվերի հաջորդականություն (00001, 00002, 00003 և այլն):
- 6.11 Հեռախոսով ստացված պատվերի ընդունման պահ է համարվում Հաճախորդի կողմից տրված պատվերի էական պայմանները Պատասխանատուի կողմից կրկնելուց հետո և Հաճախորդի կողմից «այո» կամ «հաստատում եմ» բառերը արտասանելու պահը:
- 6.12 Ընկերությունն իրավունք ունի մերժել Հաճախորդի պատվերի (պատվերի փոփոխության) ընդունումը հետևյալ դեպքերում.
 - 6.12.1 Հաճախորդի անձը հաստատող փաստաթղթի (ստորագրության, պայմանագրում նշված գաղտնաբառի) անհամապատասխանության կասկածի դեպքում,
 - 6.12.2 Հավելված 2-ով սահմանված ձևից շեղումներով կամ ջնջումներով ներկայացված պատվերի դեպքում,
 - 6.12.3 Եթե պատվերի առարկա հանդիսացող Հաճախորդի դրամական միջոցները կամ արժեթղթերը ծանրաբեռնված են այլ անձանց իրավունքներով կամ կալանքի տակ են գտնվում,
 - 6.12.4 Եթե Հաճախորդի կողմից առքի նպատակով չեն մուտքագրվել անհրաժեշտ դրամական միջոցները կամ անձնական հաշվում բացակայում են վաճառքի համար նախատեսվող արժեթղթերը,
 - 6.12.5 Եթե պատվերում նշված պայմանները չեն համապատասխանում գործարար սովորույթներին կամ գուրկ են որևէ տրամաբանությունից,
 - 6.12.6 ՀՀ օրենսդրությամբ և պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:
- 6.13 Պատվերի կատարումից հրաժարվելու դեպքում Ընկերությունն այդ մասին անհապաղ տեղեկացնում է Հաճախորդին՝ վերջինիս համապատասխան ծանուցում ուղարկելու միջոցով:

- 6.14 Այն դեպքում, երբ Հաճախորդի կողմից ներկայացված պատվերով գործարքի կատարումը չի համապատասխանում վերջինիս պահանջներին, ինչպես նաև արժեթղթերի շուկայում նրա գիտելիքներին ու փորձին, Ընկերությունը պարտավոր է անմիջապես մինչև պատվերի կատարումը տեղեկացնել այդ մասին Հաճախորդին, իսկ վերջինս էլ պարտավոր է հետ կանչել իր պատվերը՝ հետ կանչման որոշում ընդունելու մասին Հավելված 3-ով սահմանված ձևով գրավոր ծանուցելով Ընկերությանը, պատվերում կատարել համապատասխան փոփոխություններ կամ փոփոխել Հավելված 1-ով ներկայացված տեղեկությունները,
- 6.15 Հաճախորդը կարող է հետ կանչել ներկայացված պատվերը կամ դրանում էական պայմանների (գնային, քանակական կամ ժամանակային) փոփոխություններ կատարել, եթե տվյալ պատվերով դեռևս Ընկերության կողմից գործարք չի կնքվել:
- 6.16 Հաճախորդը կարող է հետ կանչել ներկայացված պատվերը հեռախոսով, ինչպես նաև Հավելված 3-ով սահմանված դիմումն առձեռն ներկայացնելու, փոստով ուղարկելու կամ Հաճախորդի և բրոքերի միջև համաձայնեցված կապի այլ միջոցներով:
- 6.17 Հաճախորդի կողմից պատվերի հետևանք ներկայացվելու դեպքում Պատասխանատուն առաջնորդվում է սույն Կանոնների 6.5 և 6.7 կետերով (հետևանք գրավոր ձևով ստանալու դեպքում) և 6.10 կետով (հետևանք հեռախոսով կամ ոչ գրավոր այլ եղանակով ստանալու դեպքում):
- 6.18 Հաճախորդի կողմից պատվերի հետևանքի՝ գործառնական բաժին ներկայացման պահ է համարվում սույն Կանոնների 6.6, 6.8 և 6.11 կետերով սահմանված պահերը:
- 6.19 Պատվերում ներառվող տեղեկությունների փոփոխության դեպքում Հաճախորդը պարտավոր է մինչև Ընկերության կողմից տվյալ պատվերով գործարքի կնքումը նոր, փոփոխված տեղեկություններ պարունակող պատվերը ներկայացնել գործառնական բաժին: Նոր տրվող պատվերում պարտադիր պետք է կատարվի նշում փոփոխման ենթակա պատվերի համարի և տրման ամսաթվի մասին: Փոփոխված տեղեկություններ պարունակող պատվերը գործառնական բաժին ներկայացված է համարվում, եթե այն ներկայացվել է առձեռն, ուղարկվել է փոստով, տրվել է հեռախոսով կամ Հաճախորդի և բրոքերի միջև համաձայնեցված կապի այլ միջոցներով (պատվերների ներկայացում գրավոր և ոչ գրավոր ձևով):
- 6.20 Փոփոխված տեղեկություններ պարունակող պատվերը ստուգվում է սույն Կանոնների 6.5, 6.7 և 6.10 կետերով սահմանված կարգով:
- 6.21 Փոփոխված տեղեկություններ պարունակող պատվերի՝ գործառնական բաժին ներկայացման պահ է համարվում սույն Կանոնների 6.6, 6.8 և 6.11 կետերով սահմանված պահերը:
- 6.22 Հաճախորդի կողմից փոփոխված տեղեկություններ պարունակող պատվերը գրավոր ձևով ներկայացվելու դեպքում այն տրվում է երկու օրինակից, ընդ որում, մեկ օրինակը մնում է գործառնական բաժնում, իսկ մյուս օրինակը «Պատվերն ընդունված է» նշագրմամբ և Պատասխանատուի ստորագրությամբ վերադարձվում է Հաճախորդին:
- 6.23 Ընկերության յուրաքանչյուր բրոքերի կողմից առանց համապատասխան ղեկավարի (գործադիր տնօրենի) վավերացման, պատվերի հիման վրա կնքվող գործարքի թույլատրելի առավելագույն սահմանաչափը կազմում է 100,000,000.00 (Մեկ հարյուր միլիոն) ՀՀ դրամ:
- 6.24 Սույն Կանոնների 6.23 կետով նախատեսված սահմանաչափը գերազանցելու դեպքում՝ համապատասխան ղեկավարը (գործադիր տնօրենը) պարտավոր է ստորագրել Ընկերության գործառնական բաժնում մնացող պատվերի օրինակը՝ վերջինիս վրա կատարելով «պատվերը վավերացված է» նշագրումը:

7. ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ՍՏԱՅՄԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴՄԱՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐ

- 7.1 Ընկերությունը պարտավոր է վարել Հաճախորդների կողմից տրված պատվերների գրանցամատյան, որում գրանցումները պետք է կատարվեն պատվերների ստացման պահից անհապաղ, սակայն ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը:
- 7.2 Պատվերների գրանցամատյանն Ընկերության կողմից վարվում է էլեկտրոնային ձևով:
- 7.3 Հաճախորդի կողմից տրված յուրաքանչյուր պատվերի մասին գրանցումներն առնվազն ներառում են հետևյալ տեղեկությունները.
- 7.3.1 Հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը),
- 7.3.2 Հաճախորդի կողմից տրված պատվերում նշված գործարքի տեսակը (առք, վաճառք),
- 7.3.3 Հաճախորդի կողմից տրված պատվերի բնույթը, եթե պատվերում նշված գործարքի տեսակն առք կամ վաճառք չէ,
- 7.3.4 Հաճախորդի կողմից տրված պատվերի տեսակը (շուկայական, լիմիտային և այլն),
- 7.3.5 Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (բացակայության դեպքում՝ թողարկողի անվանումը և արժեթղթի

տեսակը, իսկ ամանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը),

- 7.3.6 Արժեթղթերի քանակը,
 - 7.3.7 Միավորի գինը,
 - 7.3.8 Ընդհանուր ծավալը,
 - 7.3.9 Հաճախորդի կողմից տրված առանձնահատուկ ցուցումները (առկայության դեպքում),
 - 7.3.10 Հաճախորդի կողմից տրված պատվերի ստացման ճշգրիտ ժամանակը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը, օրը, ժամը և րոպեն,
 - 7.3.11 Պատվերը գրանցող աշխատակցի անունը, ազգանունը:
- 7.4 Եթե Ընկերությունը Հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման պատվերներ է ընդունում և հաղորդում, ապա պատվերի հաղորդումից հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտն Ընկերությունը պետք է կատարի գրանցումներ ընդունված և հաղորդված պատվերների մասին: Այդ գրանցումները ներառում են հետևյալ տեղեկությունները.
- 7.4.1 Հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը).
 - 7.4.2 Այն անձի անվանումը, ում հաղորդվել է պատվերը.
 - 7.4.3 Հաղորդված պատվերի պայմանները՝ համաձայն սույն Կանոնների 7.3 կետի 7.3.2-ից 7.3.9-րդ ենթակետերում նշված տեղեկատվության.
 - 7.4.4 Պատվերի հաղորդման ամսաթիվը և ճշգրիտ ժամը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը, օրը, ժամը և րոպեն:

8. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 8.1 Հաճախորդը մինչև պատվերի ներկայացումը պարտավոր է Ընկերությանը տրամադրել նաև՝
- 8.1.1 Իրավաբանական անձի անունից պատվեր ներկայացնելու իրավասություն ունեցող անձի լիազորությունը հաստատող փաստաթուղթը (լիազորագրի անհրաժեշտության դեպքում) և պատվեր ներկայացնող անձի անձնագրի պատճենը: Ֆիզիկական անձանց համար՝ միայն անձնագրի պատճենը.
 - 8.1.2 Արժեթղթերի վաճառքի պատվեր ներկայացնելու դեպքում՝ վաճառքի առարկա հանդիսացող արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում):
- 8.2 Պատասխանատուն պատվերի ընդունումից հետո բրոքերին է փոխանցում այդ պատվերի մեջ ներառված՝ գործարքի կնքման համար բոլոր անհրաժեշտ տվյալները կամ պատվերի պատճենը, որոնց հիման վրա կազմվում են բրոքերային հայտերը: Ընկերության Հաճախորդների կողմից ներկայացված պատվերները ենթակա են առաջնահերթ կատարման Ընկերության դիլերային հայտերի նկատմամբ:
- 8.3 Ընկերության կողմից գործարքները կնքվում են՝
- 8.3.1 Կարգավորվող շուկայում՝ բրոքերի կողմից արժեթղթերի առք/վաճառքի հայտ ներկայացնելու միջոցով:
 - 8.3.2 Չկարգավորվող շուկայում՝ բրոքերի կողմից կարգավորվող շուկայից դուրս արժեթղթերի առք/վաճառքի առաջարկ ներկայացնելու միջոցով:
- 8.4 Կարգավորվող շուկայում բրոքերի կողմից գործարքները կնքվում և կատարվում են կարգավորվող շուկայի կողմից սահմանված կանոններին համապատասխան:
- 8.5 Չկարգավորվող շուկայում գործարքներն Ընկերության կողմից կատարվում են արժեթղթերի շուկան կարգավորող ՀՀ օրենսդրության համաձայն: Չկարգավորվող շուկայում գործարքների իրականացման առանձնահատկությունները սահմանվում են Ընկերության և Հաճախորդի միջև կնքված չկարգավորվող շուկայում գործարքի կնքման պայմանագրով:

9. ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

- 9.1 Ընկերությունը պետք է ձեռնարկի բոլոր խելամիտ քայլերը, որ կատարի Հաճախորդի պատվերը Հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով՝ հաշվի առնելով գինը, ծախսերը, ժամկետը (արագությունը), պատվերի ընդհանուր ծավալը, պատվերի կատարման և վերջնահաշվարկի իրականացման հավանականությունը, պատվերի բնույթը և այլ գործոններ:
- 9.2 Պատվերների հիման վրա գործարքներ կնքելիս Ընկերությունը հաշվի է առնում՝

- 9.2.1 Հաճախորդի դասակարգումը որպես պրոֆեսիոնալ կամ ոչ պրոֆեսիոնալ.
- 9.2.2 Պատվերի էական պայմանները (զնային, ծավալային և քանակական պայմանները, Հաճախորդի առանձնահատուկ ցուցումները և այլն).
- 9.2.3 Պատվերում նշված արժեթղթերի բնութագրիչները (դասը և այլն).
- 9.2.4 Գործարքի կնքման վայրի (միջոցի) առանձնահատկությունները: Գործարքի կնքման վայրը (միջոցը) ներառում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ֆոնդային բորսաները, այլ կարգավորվող շուկաները կամ չկարգավորվող շուկան, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող կարգավորվող շուկաները կամ մասն գործառույթներ իրականացող անձինք:
- 9.3 Ընկերությունը կատարում է Հաճախորդների կողմից ներկայացված պատվերներն ըստ դրանց ստացման հերթականության, բացառությամբ, եթե տվյալ Հաճախորդի կողմից ներկայացվել են գործարքի կատարման առանձնահատուկ ցուցումներ կամ եթե պատվերի բնութագրիչները կամ շուկայում ստեղծված իրավիճակը դա անհնարին են դարձնում:
- 9.4 Ընկերությունը կատարում է Հաճախորդի կողմից ներկայացված պատվերը համաձայն առանձնահատուկ ցուցումների, եթե այդպիսիք ներկայացվել են վերջինիս կողմից, անգամ եթե պատվերի կատարման հետևանքով Ընկերության կողմից չի ապահովվի պատվերի կատարման լավագույն արդյունք:
- 9.5 Գործարքի կնքման լավագույն տարբերակն ընտրելիս Ընկերությունը դիտարկում է՝
- 9.5.1 Գործարքի կատարման արագությունը և հավանականությունը, ելնելով գնի և ծավալների տատանողականության մակարդակներից՝ Ընկերությունն ընտրում է Հաճախորդների պատվերների կատարման հնարավոր ամենաարագ տարբերակը:
- 9.5.2 Լավագույն գնի և հնարավոր նվազագույն ծախսերի ընտրություն. Հաճախորդների կողմից ներկայացված պատվերները կատարվում են հաշվի առնելով տվյալ պատվերների առարկա հանդիսացող արժեթղթի՝ Ընկերության գործընկեր հանդիսացող ընկերությունների կողմից առաջարկվող նվազագույն գին և հնարավոր նվազագույն միջնորդավճար պարունակող առաջարկը:
- 9.5.3 Պատվերի կատարման որակը. Ընկերության համապատասխան աշխատակիցները տարբեր շուկաներում կատարում են ամենօրյա ուսումնասիրություններ և պատվերը կատարելիս ընտրում են պատվերի անկողմնակալ, ճշգրիտ, հուսալի և անհապաղ (կախված պատվերի էական պայմաններից) կատարման ճանապարհը:
- 9.5.4 Հաճախորդի հատուկ ցուցումներ. Ընկերությունը պարտավոր է կատարել Հաճախորդի կողմից ներկայացված պատվերներն առնվազն դրանց մեջ նշված պայմաններով: Հետևաբար, եթե Հաճախորդը ներկայացնում է պատվերի կատարման հատուկ ցուցումներ, որոնք շեղվում են սույն Կանոնների 9.5 կետի 9.5.1, 9.5.2 և 9.5.3 ենթակետերի դրույթներից, Հաճախորդը պարտավոր է հստակ նշել գործարքի կատարման իր կողմից նախընտրելի տարբերակը: Համարվում է, որ Ընկերությունը ձեռնարկել է բոլոր խելամիտ քայլերը Հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով պատվերը կատարելու համար, եթե կատարել է պատվերը կամ պատվերի որևէ առանձնահատուկ պայման՝ հետևելով Հաճախորդի կողմից տրված առանձնահատուկ ցուցումներին:
- 9.5.5 Գործարքի կնքման վայրի ընտրություն. Ընկերությունը պետք է ընտրի գործարքների կնքման այն վայրը, որի միջոցով պատվերի կատարման դեպքում Հաճախորդի համախառն ծախսերը (արժեթղթի գինը և գործարքի կնքման հետ կապված այլ ծախսերը) կլինեն նվազագույնը:
- 9.6 Բրոքերային ծառայությունների մատուցման շրջանակներում արժեթղթերով գործարքներ կատարելիս Ընկերությունը պետք է՝
- 9.6.1 Համոզվի, որ գործարք կատարելու համար պատվերները պատշաճ կերպով գրանցվել և ներկայացվել են կատարման և
- 9.6.2 Հաճախորդին անհապաղ տեղյակ պահի այն էական դժվարությունների կամ բացասական հանգամանքների մասին, որոնք անհնարին են դարձնում Հաճախորդի պատվերի ճշգրիտ կատարումը:
- 9.7 Ընկերության կողմից ստացվող պատվերի լավագույնս կատարման պարտավորությունը ներառում է ոչ միայն գնային, այլ նաև այլ գործոններ, մասնավորապես՝ հնարավոր ծախսերը, գործարքի արագությունը և հավանականությունը: Նշված հանգամանքներից ելնելով՝ անգամ եթե գործարքը կատարվում է ոչ լավագույն գնով, դա ամենևին էլ չի նշանակում պատվերի հնարավոր լավագույն պայմաններով կատարման պարտավորության խախտում:
- 9.8 Ընկերությունը պետք է Հաճախորդներին տեղյակ պահի պատվերների կատարման քաղաքականության մասին և ստանա Հաճախորդի նախնական համաձայնությունն այդ քաղաքականությունն իր նկատմամբ կիրառելու վերաբերյալ:

- 9.9 Ընկերությունը պարտավոր է վերանայել պատվերների կատարման քաղաքականությունն այն դեպքում, երբ կատարվել է այնպիսի զգալի փոփոխություն, որն այլևս հնարավորություն չի տալիս այդ քաղաքականության համաձայն ընտրված գործարքների կնքման վայրի միջոցով կատարել Հաճախորդի պատվերները Հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով:

10. ԳՈՐԾԱՐՔԻ ՎԱՎԵՐԱԳՐԻ ՉԵՎԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ ԴՐԱ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

- 10.1 Գործարք կնքելուց անմիջապես հետո, սակայն ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը, բրոքերի կողմից լրացվում է գործարքի վավերագիրը՝ համաձայն Հավելված 4-ի:
- 10.2 Բրոքերի կողմից լրացված գործարքի վավերագիրը մինչև գործարքի կնքման օրվա ավարտը ներկայացվում է գործառնական բաժին:
- 10.3 Գործարքների վավերագրերը պետք է կարվեն առանձին թղթապանակում, ինչպես նաև գրանցվեն Ընկերության կողմից էլեկտրոնային ձևով վարվող վավերագրերի գրանցամատյանում:

11. ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԴԻՄԱՑ ԳԱՆՉՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ (ՉԵՎԱՎՈՐՄԱՆ) ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

- 11.1 Բրոքերային ծառայությունների դիմաց Ընկերությունը Հաճախորդներից գանձում է միջնորդավճարներ, որոնց չափը սահմանվում է Ընկերության գործադիր տնօրենի կողմից՝ ելնելով հետևյալ հիմնական սկզբունքներից.
- 11.1.1 Միջնորդավճարները պետք է լինեն ճկուն և մրցունակ՝ հաշվի առնելով համեմատելի հանգամանքներում նույնանման ծառայությունների համար գանձվող վճարների մեծությունը.
- 11.1.2 Միջնորդավճարները պետք է փոխհատուցեն ծառայությունների մատուցման համար Ընկերության կողմից կատարված ծախսերը՝ միաժամանակ ապահովելով ողջամիտ շահույթ:
- 11.1.3 Միջնորդավճարի մեծությունը պետք է ընդունելի և մատչելի լինի Հաճախորդի համար և չպետք է հանգեցնի Հաճախորդի ֆինանսական վիճակի էական վատթարացմանը:
- 11.2 Բրոքերային ծառայությունների մատուցման դիմաց Հաճախորդներից գանձվող միջնորդավճարների չափը և հաշվարկման կարգը հրապարակվում են Ընկերության ինտերնետային կայքում՝ www.fcm.am:
- 11.3 Մեկից ավելի անգամ Ընկերության բրոքերային ծառայություններից օգտված Հաճախորդների համար բրոքերային ծառայությունների մատուցման սակագները կարող են որոշվել նաև բանակցությունների միջոցով՝ համաձայն Ընկերության և Հաճախորդի միջև կնքվող սակագների փոփոխության վերաբերյալ համաձայնագրի:

12. ՀԱՃԱՒՈՐԴՆԵՐԻՆ ՏՐԱՍՄԻՐՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԵՎԸ

- 12.1 Պատվերի հիման վրա արժեթղթերի առք/վաճառքի յուրաքանչյուր գործարքը կնքելուց հետո մինչև գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտն Ընկերությունը պարտավոր է էլեկտրոնային փոստով, փոստով կամ առձեռն Հաճախորդին տրամադրել գործարքի կնքման վերաբերյալ ընթացիկ հաշվետվություն՝ համաձայն Հավելված 5-ի:
- 12.2 Եթե Հաճախորդի պատվերը կատարվում է մասնաբաժիններով, ապա Ընկերությունը Հաճախորդին ընթացիկ հաշվետվություն է ներկայացնում ըստ յուրաքանչյուր մասնաբաժնի:
- 12.3 Ընկերությունը պարտավոր է յուրաքանչյուր ամսվա համար մինչև տվյալ ամսին հաջորդող ամսվա 15-ն իր Հաճախորդին էլեկտրոնային փոստով, փոստով կամ առձեռն տրամադրել վերջինիս պատվերների հիման վրա կատարված գործարքների և արժեթղթերով ու դրամական միջոցներով հաշիվների շարժի վերաբերյալ պարբերական հաշվետվություններ:
- 12.4 Հաճախորդի պատվերների հիման վրա կատարված գործարքների վերաբերյալ պարբերական հաշվետվությունը՝ ըստ կնքված յուրաքանչյուր գործարքի, պետք է ներառի՝
- 12.4.1 Գործարքի տեսակը (առք, վաճառք).
- 12.4.2 Թողարկողի անվանումը.
- 12.4.3 Արժեթղթերի դասը.

- 12.4.4 Գործարքի առարկա հանդիսացած արժեթղթերի քանակը, մեկ արժեթղթի գինը և գործարքի ընդհանուր ծավալը.
- 12.4.5 Գործարքի կնքման ամսաթիվը (օր/ամիս/տարի).
- 12.4.6 Գանձված միջնորդավճարի մեծությունը.
- 12.4.7 Գործարքի կատարման (վերջնահաշվարկի) պայմանները.
- 12.4.8 Ընկերության կողմից սահմանված այլ տեղեկություններ:
- 12.5 Սույն Կանոնների 12.4 կետով սահմանված տեղեկությունները ներկայացվում են Հավելված 6-ին համապատասխան:
- 12.6 Հաճախորդի արժեթղթերով և դրամական միջոցներով հաշիվների շարժի վերաբերյալ պարբերական հաշվետվությունը՝ ըստ կնքված յուրաքանչյուր գործարքի, պետք է ներառի՝
 - 12.6.1 Հաճախորդի հաշվի տեսակը (արժեթղթերի, դրամական միջոցների) և համարը.
 - 12.6.2 Ամսաթիվը (օր/ամիս/տարի).
 - 12.6.3 Գործարքի, որի հիման վրա կատարվել է արժեթղթերի և/կամ դրամական միջոցների շարժը, հերթական համարը գործարքների վերաբերյալ պարբերական հաշվետվությունում.
 - 12.6.4 Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում մուտքերը.
 - 12.6.5 Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ելքերը.
 - 12.6.6 Հաշվետու ժամանակաշրջանի վերջում հաշվի մնացորդը.
 - 12.6.7 Ընկերության կողմից սահմանված այլ տեղեկություններ:
- 12.7 Սույն Կանոնների 12.6 կետով սահմանված տեղեկությունները ներկայացվում են Հավելված 7-ին համապատասխան:
- 12.8 Հաճախորդին ներկայացվող ընթացիկ և պարբերական հաշվետվությունները պետք է ներառեն նաև հետևյալ տեղեկությունները՝
 - 12.8.1 Հաշվետվության ներկայացման ամսաթիվը.
 - 12.8.2 Ընկերության անվանումը և կազմակերպական-իրավական տեսակը.
 - 12.8.3 Ընկերության գործադիր տնօրենի անունը, ազգանունը, ստորագրությունը
 - 12.8.4 Պետք է վավերացված լինեն Ընկերության կնիքով:
- 12.9 Այն դեպքում, երբ Հաճախորդին հաշվետվություններն ուղարկվում են էլեկտրոնային փոստի միջոցով, ապա դրանց ներկայացման պահ է համարվում Ընկերության էլեկտրոնային փոստի ելքային նամակագրության բաժնում տվյալ հաշվետվության՝ որպես ուղարկված նամակ գրանցման պահը:
- 12.10 Այն դեպքում, երբ Հաճախորդին հաշվետվություններն ուղարկվում են փոստով, դրանց ներկայացման պահ է համարվում փոստային ծառայության կողմից տրված անդորրագրի վրա նշված ամսաթիվը: Անդորրագիրը կցվում է հաշվետվության՝ Ընկերության օրինակին և կարվում «Հաճախորդներին տրամադրվող հաշվետվություններ» թղթապանակում:
- 12.11 Առձեռն եղանակով Հաճախորդին տրամադրվող հաշվետվությունները Հաճախորդին են տրվում երկու օրինակից: Հաճախորդը պարտավոր է ստորագրել յուրաքանչյուր հաշվետվության մեկ օրինակի վրա՝ հաստատելով, որ ստացել է դրանք: Ստորագրված օրինակը վերադարձվում է Ընկերությանը և կարվում «Հաճախորդներին տրամադրվող հաշվետվություններ» թղթապանակում: Հաճախորդի կողմից հաշվետվության՝ Ընկերության օրինակի վրա ստորագրելու պահը հանդիսանում է հաշվետվության ներկայացման պահ:

**13. ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՈՒՄ
ԱՌԱՋԱՅՈՂ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

- 13.1 Ընկերությունը պարտավոր է տեղեկացնել Հաճախորդին այն մասին, որ արժեթղթերում ցանկացած ներդրում իր բնույթով հանդիսանում է ռիսկային: Արժեթղթերի շուկայում գործարքներ կատարելիս ներդրողն առնչվում է հետևյալ ռիսկերի հետ.
 - 13.1.1 **Ֆինանսական գործիքների գների փոփոխության ռիսկ.** արժեթղթերի շուկայական գները և դրանց փոփոխությունները չեն գտնվում Ընկերության հսկողության տակ: Նշված պատճառով արժեթղթերում

ներդրման դեպքում հնարավոր է նաև Հաճախորդի պորտֆելի արժեքի նվազում, ընդհուպ մինչև ամբողջ պորտֆելի կորուստը:

- 13.1.2 **Իրացվելիության նվազման ռիսկ.** այս ռիսկը կապված է տվյալ գործիքի նկատմամբ շուկայի այլ մասնակիցների հետաքրքրության նվազման հետ: Ֆինանսական գործիքի իրացվելիությունը կախված է թողարկողների կորպորատիվ գործողություններից, նրանց ֆինանսատնտեսական գործունեությունից, ընդհանուր շուկայի վիճակից, բորսաների ներքին կանոններից, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ տվյալ ֆինանսական գործիքի գնի և, հետևաբար, Հաճախորդի պորտֆելի արժեքի վրա:
 - 13.1.3 **Օրենսդրության փոփոխության ռիսկ.** այս ռիսկը կապված է պետական իշխանության մարմինների և շուկաները կարգավորող այլ մարմինների գործողությունների հետ, որի հետևանքով Հաճախորդը կարող է կրել զգալի կորուստներ:
 - 13.1.4 **Էլեկտրոնային առևտրային համակարգերի օգտագործման հետ կապված ռիսկեր.** այս ռիսկերը կապված են համակարգչային սարքավորումների, ծրագրային ապահովման անսարքության առաջացման, էլեկտրասնուցման, կապի ընդհատումների և այլնի հետ, որոնք կարող են նպաստել Հաճախորդի ակտիվների կորուստների:
 - 13.1.5 **Այլ ռիսկեր.** վերը թվարկված ռիսկերի ցանկը սպառնիչ չէ, քանի որ բրոքերային ծառայությունների մատուցումը կարող է ուղեկցվել նաև այլ ռիսկերով:
- 13.2 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռիսկը շուկայի օբյեկտիվ իրականությունն է, նրանից չի կարելի խուսափել. ուստի Ընկերությունը կարևորում է ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ ունենալու հանգամանքը, որի նպատակն է կանխատեսել և հնարավորինս կանխել և/կամ նվազեցնել Ընկերության և Հաճախորդների ռիսկերը՝ դրանց հետևանքները վերացնելու փոխարեն: Այս առումով Ընկերությունն իրականացնում է ռիսկերի կանխարգելմանն ուղղված հետևյալ հիմնական միջոցառումները.
- 13.2.1 Թողարկողների մանրամասն վերլուծություն (առաջին հերթին Ընկերությունն ուշադրություն է դարձնում հետևյալ գործոնների առկայությանը՝ եռանդուն և վճռական կառավարիչների արհեստավարժ թիմ, ռազմավարության հստակ պատկերացում և մանրամասն գործարարության ծրագիր (քիզենս-պլան), շուկայում առաջատար դիրքեր գրավելու ներուժ, սպառողական պահանջարկի բավարարման լայն հնարավորություններ, ֆինանսական ցուցանիշներ, թափանցիկություն և կորպորատիվ կառավարման սկզբունքների պահպանում և այլն).
 - 13.2.2 Ներդրումային պորտֆելի դիվերսիֆիկացիա.
 - 13.2.3 Առկա և պոտենցիալ Հաճախորդներին (անկախ պայմանագրի ժամկետի ավարտից) իրագեկում բարձր հուսալիությամբ և եկամտաբերությամբ բնութագրվող ներդրումային նախագծերի վերաբերյալ:
- 13.3 Բրոքերային ծառայություններ մատուցելու արդյունքում առաջացող հնարավոր ռիսկերի վերլուծությունը (բացահայտումը, գնահատումը և վերահսկումը) Ընկերության ռազմավարական պլանավորման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի գնահատման անբաժանելի մասն է հանդիսանում:

14. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 14.1 Մույն Կանոնների փոփոխությունները և լրացումները հաստատվում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից և ուժի մեջ են մտնում հաստատվելուց անմիջապես հետո:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ
Հաճախորդի գիտելիքների և փորձի վերաբերյալ

Ազգանուն, անուն, հայրանուն (եթե Հաճախորդն իրավաբանական անձ է՝ անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը, ՀՎՀՀ, գրանցման համարը, գործադիր մարմնի ղեկավարի անունը ազգանունը, անձնագրային տվյալներ)
Հասցե (գտնվելու վայրը)
Կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլ. փոստ)
Ծննդյան ամսաթիվը
Քաղաքացիությունը
Գործունեության ոլորտը (կազմակերպություն/պաշտոն)

1. Ձեր կողմից արժեթղթերով կատարված գործարքների քանակը վերջին չորս եռամսյակների ընթացքում (միջին եռամսյակային կտրվածքով)

- Գործարքներ չեն իրականացրել (0 միավոր)
- մինչև 10 գործարք (2 միավոր)
- 10 և ավելի գործարք (5 միավոր)

Նշումներ _____

2. Ձեր կողմից կատարված մեկ գործարքի ծավալը միջին հաշվով կազմում է

- Մինչև 500 000 ՀՀ դրամ (0 միավոր)
- 500 000 - 1 մլն. ՀՀ դրամ (2 միավոր)
- 1 մլն. ՀՀ դրամ և ավելի (5 միավոր)

Նշումներ _____

3. Ո՞րքան է կազմում տվյալ պահին Ձեր արժեթղթերի փաթեթի մեծությունը

- Չունեն որևէ արժեթուղթ (0 միավոր)
- Մինչև 50 մլն. ՀՀ դրամ (2 միավոր)
- 50 - 100 մլն. ՀՀ դրամ (3 միավոր)
- 100 մլն. ՀՀ դրամ և ավելի (5 միավոր)

Նշումներ _____

4. Ներդրումային ծառայությունների մատուցմանն առնչվող՝ ֆինանսական շուկայում Ձեր մասնագիտական աշխատանքային փորձը

- Նման փորձ չունեմ (0 միավոր)
- Մինչև 1 տարի (2 միավոր)
- 1-2 տարի (3 միավոր)
- 2 տարի և ավելի (5 միավոր)

Նշումներ _____

5. Ո՞ր երկրներում ունեք ներդրումներ իրականացնելու փորձ (հնարավոր է ընտրել մի քանի տարբերակ)

- Հայաստանի Հանրապետություն (1 միավոր)
- Ռուսաստանի Դաշնություն (2 միավոր)
- Այլ ԱՊՀ երկիր (1 միավոր)
- Եվրոպա (5 միավոր)
- ԱՄՆ (5 միավոր)
- Նման փորձը բացակայում է (0 միավոր)

Նշումներ _____

6. Ձեր գիտելիքները կապիտալի շուկայի վերաբերյալ

- Որևէ գիտելիք չունեմ (0 միավոր)
- Ցածր – սահմանափակ ներդրումային փորձ, ներառյալ ընդհանուր բանկային գործարքներ (1 միավոր)
- Միջին – արժեթղթերի շուկայի վերաբերյալ ընդհանուր գիտելիքներ (2 միավոր)
- Բարձր – ներդրումային հարուստ փորձ, կապիտալի շուկայի խորը իմացություն (3 միավոր)
- Մասնագիտական փորձ – ներկայումս կամ անցյալում աշխատել եք որպես արժեթղթերի շուկայի վերլուծաբան, բրոքեր, փաթեթի կառավարիչ և/կամ զբաղվել եք նմանատիպ այլ գործունեությամբ (5 միավոր)

Նշումներ _____

7. Ձեր գիտելիքները և փորձը ներդրումների ոլորտում

- Որևէ գիտելիք և փորձ չունեմ (0 միավոր)
- Սահմանափակ – Ունեմ քիչ գիտելիքներ ներդրումների վերաբերյալ (1 միավոր)
- Բավարար – Ունեմ ընդհանուր գիտելիքներ ներդրումների վերաբերյալ, ունեմ ընդհանուր պատկերացում ռիսկերի վերաբերյալ (2 միավոր)
- Գերազանց – Ունեմ գերազանց գիտելիքներ ներդրումների վերաբերյալ և ռիսկերի մասին բավարար գիտելիքներ՝ ինքնուրույն ներդրումային որոշումներ կայացնելու համար (5 միավոր)

Նշումներ _____

8. Ունե՞ք բավարար գիտելիքներ և փորձ՝ գնահատելու այն բոլոր ռիսկերը, որոնք առկա են ներդրումներ իրականացնելու ժամանակ

- Այո (5 միավոր)
- Այո, սակայն ինձ անհրաժեշտ է որոշակի խորհրդատվություն (2 միավոր)
- Ոչ, ինձ անհրաժեշտ է մասնագիտական խորհրդատվություն (0 միավոր)

Նշումներ _____

9. Չեր կրթությունը

- Բարձրագույն տնտեսագիտական (նշումների դաշտում նշել մասնագիտությունը, գիտական աստիճանը (առկայության դեպքում)) (5 միավոր)
- Բարձրագույն (նշումների դաշտում նշել մասնագիտությունը, գիտական աստիճանը (առկայության դեպքում)) (2 միավոր)
- Միջնակարգ (1 միավոր)
- Չունեն (0 միավոր)

Նշումներ _____

10. Ունե՞ք, արդյոք, որակավորման վկայական (հնարավոր է ընտրել մի քանի տարբերակ)

- ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված որակավորման վկայական (4 միավոր)
- ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008թ. հունվարի 15-ի թիվ 15-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ի 3-րդ գլխով նախատեսված որակավորում, դիպլոմ կամ հավաստագիր (5 միավոր)
- Այլ որակավորման վկայական (2 միավոր)
- Չունեն (0 միավոր)

Նշումներ _____

11. Ո՞ր ներդրումային ծառայությունների հետ եք որևէ կերպ առնչվել (հնարավոր է ընտրել մի քանի տարբերակ)

- Բրոքերային ծառայություններ (3 միավոր)
- Արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվություն (1 միավոր)
- Դիլերային գործարքներ (3 միավոր)
- Այլ ներդրումային ծառայություններ (2 միավոր)
- Չեմ առնչվել (0 միավոր)

Նշումներ _____

12. Ո՞ր արժեթղթերի կամ արժեթղթերով գործարքների հետ եք որևէ կերպ առնչվել (հնարավոր է ընտրել մի քանի տարբերակ)

- Բաժնային (2 միավոր)
- Պարտքային (2 միավոր)
- Ածանցյալ (5 միավոր)
- Այլ (1 միավոր)
- Չեմ առնչվել (0 միավոր)

Նշումներ _____

13. Ձեր կողմից արժեքներով կատարված գործարքների բնույթը (հնարավոր է ընտրել մի քանի տարրերակ)

- Առք (2 միավոր)
- Վաճառք (2 միավոր)
- Ռեպո (5 միավոր)
- Այլ (1 միավոր)
- Որևէ գործարք չի իրականացվել (0 միավոր)

Նշումներ _____

Հաճախորդ _____ /անուն, ազգանուն/
ստորագրություն

« ____ » « _____ » ____ թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Հաճախորդի գիտելիքների և փորձի վերաբերյալ գնահատման հարցաթերթիկ»-ի լրացման արդյունքներով Հաճախորդը՝

(Ա.Ա.Հ. և անձնագրային տվյալներ (եթե իրավաբանական անձ է, ապա կազմակերպության անվանումը և լիազորված անձի Ա.Ա.Հ.-ն և անձնագրային տվյալները))

հավաքեց ____ միավոր, ուստի Ընկերության կողմից այն դասակարգվում է որպես՝

- Պրոֆեսիոնալ
- Ոչ պրոֆեսիոնալ

Գնահատող՝
«Ֆյուչըր կապիտալ մարկետ» ՍՊԸ
գործադիր տնօրեն

_____ /անուն, ազգանուն/
ստորագրություն

Կ.Տ.

« ____ » « _____ » ____ թ.

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՄԱՏՈՒՑՎՈՂ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՄԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՃԱԽՈՐԴԻ
ԳԻՏԵԼԻԶՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԻ ՄԱՍԻՆ

Պահանջվող տեղեկատվություն	Հաճախորդի նշումներ
Նշեք այն բրոքերային ծառայությունները, որոնց հետ որևէ կերպ առնչվել եք	
Նշեք այն արժեթղթերով գործարքները և արժեթղթերը, որոնց հետ որևէ կերպ առնչվել եք	
Ձեր կողմից արժեթղթերով կատարված գործարքների բնույթը	
Ձեր կողմից արժեթղթերով կատարված գործարքների ծավալը (ՀՀ դրամ)	
Ձեր կողմից արժեթղթերով կատարված գործարքների հաճախականությունը	
Ձեր կողմից արժեթղթերով կատարված գործարքների ժամանակահատվածը, որի ընթացքում կատարվել են այդ գործարքները	
Ձեր կրթական մակարդակը	
Ձեր մասնագիտությունը	
Ձեր զբաղմունքը	

_____ (անուն, ազգանուն)
 (ստորագրություն)

**Արժեթղթերի առք/վաճառքի
պատվեր N ____**

Պատվերի ստացման ժամանակը (տարի/ամիս/օր/ժամ/րոպե) _____

Հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը) _____

Պատվեր գրանցող անձի անունը, ազգանունը _____

Պատվերը ներկայացվել է գրավոր ձևով
 ոչ գրավոր ձևով

Գնային պայմանները _____

Ծավալային պայմանները _____

- Շուկայական հանձնարարական
- Գնման լիմիտային հանձնարարական
- Վաճառքի լիմիտային հանձնարարական
- Գնման ստոպ հանձնարարական
- Վաճառքի ստոպ հանձնարարական
- Գնման ստոպ լիմիտային հանձնարարական
- Վաճառքի ստոպ լիմիտային հանձնարարական

- Բավարարել լրիվ
- Բավարարել մասնակի
- Հանել մնացորդը

Ժամանակային պայմանները _____

- Անմիջապես բավարարել կամ հանել
- Պահել հերթում մինչև բավարարումը

N	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (բացակայության դեպքում՝ բողարկողի անվանումը և արժեթղթի տեսակը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրան կարագիրը)	Գործարքի տիպը (կարգավորվող շուկայում/չկարգավորվող շուկայում)	Գործարքի տեսակը (առք, վաճառք)	Պատվերի բնույթը, եթե պատվերում նշված գործարքի տեսակն առք կամ վաճառք չէ	Գործարքի ընդհանուր ծավալը	Հաճախորդի կողմից տրված առանձնահատուկ ցուցումներ

Մույնով հավաստիացնում եմ, որ ծանոթ եմ Ընկերության պատվերների կատարման քաղաքականությանը և տալիս եմ իմ նախնական համաձայնությունն այդ քաղաքականությունն իմ նկատմամբ կիրառելու վերաբերյալ, ինչպես նաև հավաստիացնում եմ, որ Ընկերությունը ներկայացրել է արժեթղթերում ներդրումների հետ կապված ռիսկերի վերաբերյալ բավարար տեղեկատվություն:

Հաճախորդ _____
(ստորագրություն)

Պատվեր գրանցող _____
(ստորագրություն)

«Ֆյուչըր Կապիտալ Մարկետ» ՍՊԸ
Գործադիր տնօրեն՝
պրն. _____

Գիմում

Խնդրում եմ հետ կանչել իմ կողմից /--/--/----/ ներկայացված թիվ /----/ արժեթղթերի առք/վաճառքի պատվերը:
օր / ամիս / տարի

Գիմող՝ _____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

(օր, ամիս, տարի)

(ժամ, րոպե)

Գ Ո Ր Ծ Ա Ր Ք Ի Վ Ա Վ Ե Ր Ա Գ Ի Ր N__

Վավերագրի լրացման ժամանակը (րոպե/ժամ/օր/ամիս/տարի) _____

պատվեր N__

Հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը) _____

N	Արժեքի տարբերակիչ ծածկագիրը (բացակայության դեպքում՝ թողարկողի և արժեքի անվանումը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրանկարագիրը)	Գործարքի կնքման ամսաթիվը (տարի/ամիս/օր)	Գործարքի կնքման ժամը (ժամ/րոպե)	Գործարքի կնքման վայրը	Գործարքի տեսակը (առք, վաճառք) կամ բնույթը, եթե առք կամ վաճառք չէ	Գնված կամ վաճառված արժեքի քանակը և ընդհանուր ծավալը		Մեկ արժեքի գինը	Գործարքի մյուս կողմը	Գործարքի կատարման (վերջնահաշվարկի) պայմանները
						քանակը	ընդհանուր ծավալը			

Բրոքեր՝ _____ (անուն, ազգանուն)
(ստորագրություն)

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Պատվերով գործարքի կնքման վերաբերյալ

Ներդրումային ընկերության անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը

Հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը)

Գործարքի կնքման վայրը

N	Պատվերում նշված գործարքի տեսակը (առք, վաճառք)	Պատվերի տեսակը և բնույթը	Գործարքի կնքման ամսաթիվը (տարի/ամիս/օր/)	Գործարքի կնքման ժամը (ժամ/րոպե)	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը, բողարկման համարը (բացակայության դեպքում՝ բողարկողի անվանումը և արժեթղթի տեսակը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրանկարագիրը)	Գործարքի առարկա հանդիսացած արժեթղթերի քանակը	Մեկ արժեթղթի գինը	Գործարքի ընդհանուր ծավալը	Գ-անձված միջնորդավճարի մեծությունը	Հաճախորդի կողմից վճարումները կատարելու պայմանները և ժամկետը, եթե դրանց մասին նա նախօրոք չի տեղեկացվել	Նշում, եթե գործարքի մյուս կողմը հանդես է եկել Ընկերությունը, վերջինիս խմբի մեջ մտնող որևէ անձ, կամ Ընկերության մեկ այլ հաճախորդ, բացառությամբ եթե գործարքն իրականացվել է այնպիսի կարգավորվող շուկայում, որն ապահովում է գործարքի մի կողմի անհայտ լինելը մյուսի համար

Գործադիր տնօրեն՝ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կ.Տ.

«___» «_____» _____թ.

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Պատվերով կատարված գործարքների վերաբերյալ

Ներդրումային ընկերության անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը

___/___/___
հաշվետու ժամանակաշրջանի սկիզբը (օր/ամիս/տարի)

___/___/___
հաշվետու ժամանակաշրջանի վերջը (օր/ամիս/տարի)

N	Գործարքի տեսակը (առք, վաճառք)	Թողարկողի անվանումը	Արժեթղթերի դասը	Գործարքի առարկա հանդիսացած արժեթղթերի քանակը	Մեկ արժեթղթի գինը	Գործարքի ընդհանուր ծավալը	Գործարքի կնքման ամսաթիվը (օր/ամիս/տարի)	Գանձված միջնորդավճարի մեծությունը	Գործարքի կատարման (վերջնահաշվարկի) պայմանները

Գործադիր տնօրեն՝ _____ (ստորագրություն) _____ (անուն, ազգանուն)

Կ.Տ.

«___» «_____» _____թ.

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հաճախորդի արժեթղթերով և դրամական միջոցներով հաշիվների շարժի վերաբերյալ

Ներդրումային ընկերության անվանումը, կազմակերպական- իրավական տեսակը

___/___/___

հաշվետու ժամանակաշրջանի սկիզբը (օր/ամիս/տարի)

___/___/___

հաշվետու ժամանակաշրջանի վերջը (օր/ամիս/տարի)

N	Հաճախորդի հաշվի տեսակը (արժեթղթերի, դրամական միջոցների) և համարը	Ամսաթիվը (օր/ամիս/տարի)	Գործարքի, որի հիման վրա կատարվել է արժեթղթերի և/կամ դրամական միջոցների շարժը, հերթական համարը գործարքների վերաբերյալ պարբերական հաշվետվությունում	Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում մուտքերը	Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ելքերը	Հաշվետու ժամանակաշրջանի վերջում հաշվի մնացորդը

Գործադիր տնօրեն՝ _____ (ստորագրություն) _____ (անուն, ազգանուն)

Կ.Տ.

«___» «_____» _____թ.